ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 5-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2020 թվականի հունվարի 22-ի թիվ 17/27.3/1233 գրությունը՝ պետական փորձագիտական եզրակացության վերաբերյալ. ***համայնքի ավագանին որոշում է՝***

Քանի որ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար համայնքի 2020 թվականի բյուջեի բյուջեի տարեսկզբի մնացորդը /հավելուրդը/ կազմել է՝ Վարչական բյուջեի մասով 26 262 947 ՀՀ դրամ, Ֆոնդային բյուջեի մասով 18 257 919 ՀՀ դրամ Ընդամենը 44 520 866 ՀՀ դրամ, հետևաբար.

1.Վարչական մասի տարեսկզբի մնացորդը /հավելուրդը/՝ «26 262 947» - 164 000 դրամ, որպես նախորդ տարվա պարտք, մնացածը 26 098 947 դրամը տեղափոխել ֆոնդային մաս, և ֆոնդային մասի տարեսկզբի մնացորդը «0» թիվը փոխարինել «44 356 866» թվով: Բյուջեն հավասարակշռելու համար. Տարեսկզբի մնացուրդը բաշխել հետևյալ ուղղություններով.

2. Բաժին 05 Խումբ 2 Դաս 1 «Շրջակա միջավայրի պաշտպանություն» Կեղտաջրերի հեռացում ծախսերի նախահաշվի Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում՝ 5113 հոդվածի «0» թիվը փոխարինել «39466.866» թվով: Մասնագիտական ծառայություններ 4241 հոդվածով տարեկան նախատեսված գումարը ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով տեղափոխել առաջին եռամսյակ:

3.Բաժին 05 Խումբ 1 Դաս 1 «Շրջակա միջավայրի պաշտպանություն» Աղբահանում և սանիտարական մաքրում ծախսերի նախահաշվի որպես նախորդ տարիների պարտք Շենքերի և շինությունների շինարարություն՝ 5112 հոդվածի «0» թիվը փոխարինել «4890.0» թվով, Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ ՝ 4111 հոդվածի «39800.0» թիվը փոխարինել «38045.0» թվով: 4213 Կոմունալ ծառայությունների հոդվածի «2350.0» թիվը փոխարինել «8150.0» թվով: Գույք և սարքավորումների վարձակալություն՝ 4216 հոդվածի «2500.0» թիվը փոխարինել «1875.0» թվով: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 4252 հոդվածի «990.0» թիվը փոխարինել «690.0» թվով: Տրանսպորտային նյութեր՝ 4264 հոդվածի «7500.0» թիվը փոխարինել «5964.0» թվով, որից նախորդ տարիների պարտք 164000 ՀՀ դրամ:

4. Բաժին 11 Խումբ 1 Դաս 1 «ՀՀ համայնքների վարչական բյուջեի պահուստային ֆոնդ» Պահուստային ֆոնդի ծախսերի նախահաշվի ընդամեն «21700.0» թիվը փոխարինել «20280.0»թվով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ